



Հաստատված է՝
Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի նախագահ
Արա Ջոհրաբյանի 25.07.2016թ. թիվ 226-Լ որոշմամբ

* * * * *

Կ Ա Ր Գ

«50 ՓԱՍՏԱԲԱՆԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵՋԵԳԵԼՅԱՆ» ԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգն ընդունվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 13-րդ հոդվածի ութերորդ մասի պահանջին համապատասխան և սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կողմից Ռայմոն Եզեզեյանից (**այսուհետ՝ Բարերար**) տրամադրվող նվիրաբերության գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունները:
2. «Ռայմոն Եզեզեյան» թոշակի շահառու է համարվում սույն կարգին համապատասխան որոշված փաստաբանը (**այսուհետ՝ Շահառու**):
3. Շահառուների քանակը չի կարող գերազանցել 50-ը (հիսունը) (**այսուհետ՝ Շահառուների քանակ**):
4. «Ռայմոն Եզեզեյան» թոշակը նախատեսում է մեկ Շահառուի համար մեկ տարվա անդամավճարի վճարում, որպես՝ կանխավճար:

* * *

II. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Շահառուներին որոշելու համար ձևավորվում է ժամանակավոր հանձնաժողով (**այսուհետ՝ Հանձնաժողով**) հետևյալ կազմով՝
 - Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար,
 - Պալատի գանձապահ,
 - Բարերարի ներկայացուցիչ:

6. Հանձնաժողովը՝
- ստուգում է Շահառուների թեկնածուների համապատասխանությունը սույն կարգի պահանջներին.
 - հաստատում է Շահառուների ցանկը և ներկայացնում է Պալատի ֆինանսական տնօրենին:
7. Շահառուներին որոշելու համար Հանձնաժողովն՝ ըստ ստորև նշված առաջնահերթության, նախապատվությունը տալիս է ստորև նշված պահանջներին համապատասխանող փաստաբաններին.
- 7.1. 1991 թվականի հունվարի 1-ից (ներառյալ) հետո ծնված փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 40 (քառասուն) փաստաբան**: Այս խմբում նախապատվությունը տրվում է տարիքով առավել փոքր փաստաբաններին:
- 7.2. Կին փաստաբաններին, որոնք հանդիսանում են միայնակ մայր՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան** : Սույն կարգի իմաստով միայնակ մայր է համարվում ամուսնության մեջ չգտնվող այն կինը, ում խնամքի տակ գտնվում է առնվազն մեկ անչափահաս երեխա, որի ծննդյան վկայականում (**ա**) բացակայում է երեխայի հոր մասին գրանցումը, կամ, (**բ**) երեխայի հոր մասին գրանցումը կատարվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մոր ցուցումով, կամ, (**գ**) երեխայի հայրը մահացել է, կամ (**դ**) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի հայրը ճանաչվել է անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած: Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ առավել փոքր տարիքի երեխա ունեցող փաստաբաններին:
8. Սույն կարգի 7-րդ կետում նշված խմբերում Շահառուների տեղերի ավելացման դեպքում, այդ տեղերը պետք է բաշխվեն մյուս խմբում՝ ըստ խմբում շահառուի գրանցման՝ սույն կարգով սահմանված առաջնահերթության: Տարբեր խմբերի պահանջներին բավարարող փաստաբանը կարող է Շահառու հանդիսանալ միայն մեկ խմբի համար:
9. Շահառու կարող է լինել սույն կարգի 7-րդ կետով սահմանված խմբերի պահանջներին բավարարող այն փաստաբանը, ով մինչև 2016 թվականի օգոստոսի 25-ը (ներառյալ) դիմել է Հանձնաժողովին և Հանձնաժողովի կողմից ընդգրկվել Շահառուների ցուցակում:
10. Շահառու չի կարող լինել այն փաստաբանը, ով՝
- 10.1. ունի անդամավճարի չմարված պարտավորություն.
 - 10.2. 2015 կամ 2016 թվականներին ընդգրկվել է Բարերարի սահմանած նվիրաբերության այլ շահառուների ցանկում.
 - 10.3. հանդիսանում է Փաստաբանների պալատի աշխատակից կամ

մարմնի անդամ:

11. Շահառու հանդիսացող փաստաբանի արտոնագիրը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում՝ կասեցման կամ դադարեցման պահին չմարված կանխավճարի չսպառված մնացորդը փոխանցվում է սույն կարգին համապատասխան որոշված մյուս փաստաբանին: Սույն կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ Շահառու հանդիսացող փաստաբանը անդամավճարից լրիվ կամ մասնակի ազատվելու արտոնություն է ձեռք բերում:
12. Շահառուների ցուցակի հիման վրա Շահառուին հանձնվում է **«փաստաբան եզեզեյանի 2016 թվականի թոշակ»** անվան ակարգով հավաստագիր:

* * *

III. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 25-ից:
14. Հանձնաժողովը սույն կարգի համաձայն հաշվարկ կատարելու ժամանակ կոտորակային միավորներ ստանալու դեպքում դրանք կարող է կլորացնել:
15. Սույն կարգով նախատեսված Շահառուների ցուցակը պետք է ներկայացվի մինչև 2016 թվականի սեպտեմբերի 10-ը:
16. Սույն կարգը կարող է փոփոխվել կամ լրացվել Պալատի նախագահի որոշմամբ:

* * *